

**«ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՔ (ԱՐՑԱԽ,
ՈՒՏԻՔ). ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ»
(2019, ՕԳՈՍՏՈՍԻ 26-27, ԳԱՆԶԱՍԱՐ, ԱՐՑԱԽ)
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ**

**Proceedings of the International Conference “Armenian Eastern Parts
(Arstakh, Utik): History and Culture”**

(August 26-27, 2019, Gandzasar, Arstakh)

**Из материалов Международной конференции “Восточные пределы
Армении (Арцах, Утик): история и культура”
(26-27 августа, 2019, Гандзасар, Арцах)**

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿԱԼՅՈՒԱՐԻ

AIEA-ի նախագահ

ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

*Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակեան,
Արցախի Հանրապետության կրթության եւ գիտության նախարար
Նարինէ Աղբալեան,
Արցախի Հանրապետության մշակութային նախարար Լեռնիկ
Յովհաննիսյան,
Սրբազան Տէր Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեան,
Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Վահան Տէր-Ղեւոնդեան,
Մատենադարան-Գանձասար գիտամշակութային կետրոնին տնօրէն Արամ
Թորոսեան
Յարգելի գործընկերներ, սիրելի բարեկամներ,

Ամենախոր գնահատանքի զգացումներով իմ ողջոյնս կու տամ ձեզի, այս
գիտաժողովին բացման հանդիսաւոր նիստին առթիւ: Շատ ուրախ եմ հոս ըլլալ
տարբեր պատճառներով:*

*Իմ անձնական անունով եւ Հայկական Ուսումներուն Միջազգային Ընկե-
րակցութեան (ՀՈՄԸ) կոմիտէին միւս անդամներուն կողմէն կը փափաքիմ մեր*

խորունկ երախտագիտությունը յայտնել Մատենադարանի տնօրէնին, Գանձասարի կետրոնին տնօրէնին եւ իր բոլոր գործակիցներուն հանդէպ, ինչպէս նաեւ Արցախի Մշակութային եւ Կրթութեան ու գիտութեան նախարարութիւններուն հանդէպ, որոնք վեհանձնութեամբ իրենց օգնությունը տուին, որպէսզի այս գիտաժողովը գոյութիւն ունենայ:

Ամէն ծրագիր, որ կ'իրականանայ, իր յատուկ պատմությունը ունի: Ներկայ գիտաժողովին պատմությունը կարճորէն կ'ուզէի յիշեցնել քեզի:

Հինգ տարի առաջ, AIEA-ին պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, համաժողովներէն մէկը Հայաստան տեղի ունեցաւ՝ Մատենադարանին հրաւերին եւ կազմակերպութեան շնորհիւ: Իսկապէս արտակարգ եւ պատմական օրեր եղան, որոնք AIEA-ի թէ՛ պաշտոնական թէ՛ անձնական տարեգրություններուն մէջ երկաթագիրով գրուած են: Ինչպէս արդէն ունեցայ ըսելու առիթը, Հայաստան գալը միշտ յատուկ նշանակություն ունի մեզի՝ Եւրոպական եւ ընդհանուր առմամբ արեւմտեան հայագետներուն համար: Բազմաթիւ են գիտական համագործակցությունները եւ ծրագիրները, որոնք մեզ բոլորը Մատենադարանին հետ կը կապեն: Բայց կարեւոր էր երեւան ըլլալ իբր Ընկերակցություն եւ իբր Ընկերակցութեան անդամն է, որ նախորդ տնօրէնը՝ Հրաչեա Թամրազեան, մեզ հրաւիրեց այն ատենը:

Այն գիտաժողովը տարբեր դրական հետեւանքներ ունեցաւ: AIEA-ի Հայաստանցի անդամները բազմապատկուեցան, ինչ որով հպարտ ենք: Քանի մը տարիներ առաջ, նոյնպէս առաջին անգամ ըլլալով՝ հրաւիրեցինք իբր AIEA-ի կոմիթէի անդամ Հայաստանցի AIEA-ի անդամ մը՝ այսինքն Փրոֆ. Դր. Նազենի Ղարիբեան:

Հինգ տարի առաջ, AIEA-ի վերոյիշեալ ընդհանուր գիտաժողովին ատեն, Մատենադարանին պատասխանատուններուն հետ տարբեր ծրագիրներուն մասին խօսեցանք: Ի միջի այլոց Մատենադարան-Գանձասարի կետրոն գիտաժողով մը կազմակերպելու միտքը ծագեց: Ի հարկէ 2014ին AIEA-ի գիտաժողովէն վերջ Գանձասարը այցելեցին, ուր շինութեան աշխատանքները ընթացքին մէջ էին:

Հրաչեայ Թամրազեանին համար շատ բան կը նշանակէր: Ինքը թելադրեց AIEA-ի նոր ընդհանուր գիտաժողով մը կազմակերպել: Տարբեր գաղափար մը թելադրեցի իրեն AIEA-ի կոմիտէին ուրիշ անդամներուն հետ խօսելէ ետք: Այն է՝ Արցախի պատմութեան մասին յատուկ գիտաժողով մը կազմակերպել: Ի հարկէ AIEA-ն յատուկ նիւթերու վերաբերեալ գանազան workshop-ներ արդէն կազմակերպեց եւ նոյն աւանդութեան ակօսին մէջ այսպիսի գիտաժողով մը կրնար կազմակերպուած ըլլալ:

Այդպիսի գիտաժողովին նպատակը պիտի ըլլար Փանձասարի եւ ընդհանրապէս Արցախին երկար պատմութիւնը միասին ուսումնասիրել տարբեր տեսանկիւններէն՝ պատմական, արուեստական, լեզուագիտական, բանասիրական եւ այլն:

Շատ երախտագիտական եմ տնօրէն Տեր-Ղեւոնդեանին եւ Արտասահմանի Բաժինին ղեկաւարչուհիին՝ Վարդի Քեշիշեանին հանդէպ, որոնք անցեալ տարի, իմ Երեւան այցելութեան ընթացքին, ասպիսի գիտաժողովը կազմակերպել AIEA-ին կոմիտէի ուղղած նոր առաջարկը մեծ ոգեւորութեամբ ընդունեցան: Եւ ոչ միայն ընդունեցան, բայց իրենց բոլոր ջանքերը թափեցին, որպէսզի այդ ծրագիրը իրականայ:

Այսօր Մատենադարան-Փանձասար բաժինը շքեղ նոր կէտրոն եւ թանգարան մըն է: Կը մաղթեմ, որ Արցախի համար կարեւոր գիտական կէտրոն մը դառնայ, ինչպէս Մատենադարանը Հայաստանի համար ամենագլխաւոր կէտրոններէն մէկն է: Կը մաղթեմ, որ այս նորանոր կէտրոնը յոյս իբր սիրտ մը, որ Արցախին մէջ բաբախէ՝ նոր ուժեր բերելով իրեն հին եւ հարուստ պատմութեան ակօսին մէջ: Օրերուս նպատակն է այդ հին եւ հարուստ պատմութիւնը ընդլայնել մեր զեկուցումներով:

Անգամ մը եւս Հայաստանի եւ Արցախի կազմակերպիչներուն խորապէս շնորհակալ եմ, ինչպէս նաեւ ամէն զեկուցողներուն, որոնք մեր հրաւերը ընդունեցին: Ձերմ շնորհակալութիւն մը Տկ. Սոնա Բալոյեանին համար, որ էական դեր մը ունեցաւ մեր բոլորը հաւաքելու նպատակով:

Զեզ բոլորին կը մաղթեմ յաջողական եւ հետաքրքրական օրեր: